ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏՈՆՅԱԼ ԴԱՍԻ ԹՎԱՔԱՆԱԿՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ XIX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

ԱՋԱՏ ՀԱՄԲԱՐՅԱՆ

Պատմաբաններն ու տնտեսագետները Արևելյան Հայաստանի արտոնյալ դասի պատմության հարցերին անդրադարձել են դեռ XIX դ.։ Ս. Եղիազարյանը 1880-ական թվականներին նշել է, որ այդ դասն ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Երևանի նահանգում, բաղկացած էր հողատերերից կամ կալվածատերերից (մուլքադարներ, թիուլդարներ, բեգեր, մելիքներ, աղաներ, խաններ և այլն), քրիստոնյա ու մահմեդական հոգևորականներից, ցարական աստիճանավորներից ու վաճառականներից։ Կալվածատերերն ու հոգևորականները ապրում էին գերազանցապես գյուղում, իսկ վաճառականները ու պաշտոնյաները՝ քաղաքում։

Գյուղում բնակվողները ունեին հողամասեր, զբաղվում էին երկրագործությամբ և իրենց վարքուբարքով, հասարակական զարգացման մակարդակով գրեթե չէին տարբերվում գյուղացիներից, իսկ քաղաքում բնակվողները գյուղում թեև ունեին հողամասեր, բայց դրանք մշակում էին ոչ թե իրենք, այլ նրանց հարազատները կամ վարձակալները։ Նրանք զբաղվում էին պաշտոնավարությամբ, առևտրական գործունեությամբ և այլն։ Պաշտոնյաներն ու կալվածատերերը, իբրև կանոն, աղատ էին պետական հարկերից ու տուրքերից։ Վաճառականները դրանք վճարում էին, իսկ հոգևորականները, գյուղացիների ցանկությամբ, կարող էին վճարել կամ չվճարել (մեծ մասամբ չէին վճարում)։

Ս. Եղիազարյանը այնուհետև նշել է, որ արտոնյալ անձինք կոչվում էին նաև կողմնակի մարդիկ։ Նրանց առանձնացումը ինքնուրույն դասի՝ իշխանությունների կողմից կատարվեց XIX դ. երկրորդ քառորդին և վերջնականապես ավարտվեց 1860-ական թվականների կեսերին։ Մինչև գյուղական համայնքների մասին կանոնադրության հրատարակումը (1864) արտոնյալ դասի ներկայացուցիչներն ընտրվում էին համայնքի վարչական մարմիններում և ղեկավարում համայնքը։ Դրանից հետո նրանք զրկվեցին այդ իրավունքից և հեռացվեցին համայնքի կառավարման ապարատից[1]։

Սովետական պատմաբաններն ու տնտեսագետները ավելի խորացրին արտոնյալ դասի պատմության հարցերի մշակումը։ Վ. Ռշտունին, Հ. Թումանյանը, Մ. Ադոնցը, Խ. Ավդալբեգյանը, Օ. Հովհաննիսյանը, Ե. Եգանյանը և ուրիշներ ցույց տվեցին ցարական կառավարության ու այդ դասի օրգանական կապերը, կալվածատերերի և գյուղացիների դասակարգային հարաբերությունները, բնութագրեցին կալվածատերերի տնտեսական գործունեության չափերն ու ձևերը, լուսաբանեցին գյուղացիական ռեֆորմի դասակարգային, հակագյուղացիական բնույթը, ապացուցեցին պետական ու գյուղացիական հողերի հափշտակումները կալվածատերերի կողմից, քննեցին տոհմիկ և ոչ տոհմիկ ազնվականության առաջացումը, տվեցին պետական, կալվածատիրական ու գյուղացիական հողատիրության պատկերը, վեր հանեցին արևելա-

---

[1] С. А. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье. ч. I, Сельская община, Казань, 1889.

հայ գյուղում գոյություն ունեցող դասակարգային գլխավոր հակադրությունը և այլն։ Չնայած այդ ամենին, Արևելյան Հայաստանի արտոնյալ դասի պատմությունը տակավին քիչ է ուսումնասիրված։ Մինչ այժմ նրա մասին չկա մասնագիտական հետազոտություն։ Փորձենք լուսաբանել այդ վերնախավի թվաքանակն ու ազգային կազմը, ցույց տալով XIX դ. երկրորդ կեսին կատարված փոփոխությունները։

Երևանի նահանգի նահանգապետի տվյալներով, 1857 թ. նահանգում հաշվվում էին 206 մելիքներ ու անձնական ազնվականներ, 4723 քրիստոնյա հոգևորականներ, 349 խաներ, 1818 բեգեր, 2351 աղաներ ու մոլլաներ, ընդամենը՝ 9447 մարդ[2], իսկ 1862 թ.՝ 110 ժառանգական ազնվականներ, 275 անձնական ազնվականներ, 212 մելիքներ, 147 խաներ, 3458 բեգեր, 64 աղաներ, 311 զինվորական աստիճան ունեցողներ և 5247 հոգևորականներ, ընդամենը՝ 9824 մարդ[3]։

Այդ տեղեկություններով կարելի է ընդհանուր պատկերացում կազմել արտոնյալ դասի առանձին շերտերի մասին, բայց դժվար է ցուցադրել նրանց քանակական աճը, քանի որ նահանգապետը մի դեպքում տվյալներ է բերում դրանց որոշ մասի վերաբերյալ, մյուս դեպքում չի բերում, մի դեպքում ներկայացնում է այդ շերտերն առանձին-առանձին, մի այլ դեպքում՝ միասին, մի դեպքում ոչ հարկատուների կամ արտոնյալների մեջ մտցնում է նաև Կողբի աղահատներին, մի այլ դեպքում շրջանցում է դրանց և այլն։

Երևանի նահանգի արտոնյալ դասի մասին համեմատաբար հիմնավոր են նահանգապետի և նահանգական վիճակագրական կոմիտեի 1865 թ. բերած տեղեկությունները։ Ահա դրանք[4].

Աղյուսակ № 1

Արտոնյալ խմբերը	Տղամարդ	Կին	Ընդամենը
ժառանգական ազնվականներ	77	53	130
անձնական ազնվականներ	332	282	614
խաներ	66	57	123
բեգեր	1587	1477	3064
մելիքներ	147	101	248
աղաներ	21	19	40
զինվորական աստիճան ունեցողներ	22	19	41
ուղղափառ հոգևորականներ	29	32	61
լուսավորչականներ	1972	1512	3484
հայ կաթոլիկներ	32	39	71
մահմեդական հոգևորականներ	645	578	1223
ընդամենը	4930	4169	9099

№ 1 աղյուսակից երևում է, որ հոգևորականներն ավելի շատ էին, քան աշխարհիկները։ Ընդ որում, հոգևորականների մեջ մեծաքանակ էին լուսավորչականները, իսկ աշխարհիկների մեջ՝ բեգերը։ Աղբյուրները, ցավոք, տեղեկություններ չեն տալիս վաճառականների մասին։ Բայց հավանական է, որ նրանք փոքրաթիվ էին։

---

2 «Сельское хозяйство и аграрные отношения», т. II, составитель проф. П. В. Гугушвили, Тбилиси, 1950, с. 662—663.

3 Նույն տեղում, էջ 665։

4 «Сборник статистических сведений о Кавказе», т. I, отд. I, гл. III, Тифлис, 1869, с. 8—9.

Անձնական ազնվականներն ու զինվորական աստիճան ունեցողները, ինչպես նշում է Վ. Ռշտունին, պետական պաշտոնյաներ ու զինվորական ծառայողներ էին[5], իսկ ժառանգական ազնվականները, խաները, բեգերը, մելիքները և մասամբ աղաները՝ հողատերեր։ Ընդ որում, դրանցից շատերը տոհմիկներ չէին և ազնվականների շարքերն էին մտել կա՛մ պետական հողերը զավթելու և գյուղացիներին իրենց իշխանությանը ենթարկելու, կա՛մ էլ կառավարությանը մատուցած ծառայության դիմաց հողեր ու գյուղեր ստանալու ճանապարհով։ Դրանց կոչման օրինականության հարցը պետք է քննվեր 1865 թ. ստեղծված բեգական հանձնաժողովի կողմից։ 1867 թ. այդ հանձնաժողովն ավարտեց իր աշխատանքները և քննելով 586 մարդու գործ, նրանցից 282-ին համարեց տոհմիկ ազնվականներ, իսկ 304-ին՝ ոչ[6]։ Հարցի լուծման ընթացքում, անշուշտ, իրենց դերը խաղացին շարաշահումները։ Սակայն ցարական պաշտոնյաները, ղեկավարվելով կառավարության սոցիալական հենարանն ամրապնդելու քաղաքականությամբ, ոչ տոհմիկներին չղրկեցին նրանց տիրույթներից։ Տոհմիկներին պաշտոնապես սկսեցին անվանել մահմեդական բարձր դասին պատկանող, իսկ ոչ տոհմիկներին՝ այդ դասին չպատկանող անձինք։ Իրականում այդ դասը բաղկացած էր ոչ միայն մահմեդական, այլև քրիստոնյա (հայ) հողատերերից։

XIX դ. 70—80-ական թվականների Արևելյան Հայաստանի արտոնյալ դասի մասին արժեքավոր տեղեկություններ են տալիս ընտանեկան ցուցակները։ Իշխանությունները դրանք կազմեցին 1886 թ.՝ զինակոչիկներ հավաքելու և հարկային գործը կարգավորելու համար։ Աշխատանքները ղեկավարեցին գավառապետները՝ իրենց օգնականների և այլ ստորադրյալների միջոցով, որոնք գյուղերում հրավիրելով ժողովներ, ճշտեցին ցուցակները և դրանք ուղարկեցին համապատասխան հաստատություններ։ Ցարական պաշտոնյաներն այդ ցուցակները կազմելիս տեղեկություններ հավաքեցին նաև արտոնյալ կամ ոչ հարկատու դասի մասին, չնչելով, սակայն, թե ո՞ւմ կամ ինչ խավեր նկատի ունեն դրա տակ։ Համենայն դեպս, նրանց տեղեկությունները որոշակի պատկերացում են տալիս 1870—1880-ական թվականների Երևանի նահանգի արտոնյալ դասի քանակական աճի ու տեղաբաշխման մասին (տե՛ս աղյուսակ № 2)[7]։

№ 2 աղյուսակից երևում է, որ նահանգի արտոնյալ դասը 1873—1886 թթ. զգալիորեն աճել է, 1836 տնտեսությունից հասնելով 2250-ի։ Արտոնյալներն ապրում էին նահանգի բոլոր քաղաքներում ու գավառներում, բայց տարբեր քանակներով։ Քաղաքներից ամենաշատը բնակվում էին Երևանում, իսկ գավառներից՝ Էջմիածնում։

1897 թ. մարդահամարի տվյալները հնարավորություն են տալիս ավելի բազմակողմանիորեն բնութագրել արտոնյալ դասը։ Նախ բերենք տեղեկություններ արտոնյալների ծննդավայրերի մասին (տե՛ս աղյուսակ № 3)[8]։

№ 3 աղյուսակից երևում է, որ Երևանի նահանգի ազնվականության մեծամասնությունը նույն գավառում ծնվածներ էին։ Ապա մեծ էր այլ նահանգներում ծնված անձնական ազնվականների ու պաշտոնյաների թիվը։ Դրանք գերազանցապես ռուսներ էին, որոնք եկել կամ ուղարկվել էին Արևելյան Հա-

---

5 В. А. Рштуни, Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947, с. 155—157.

6 «Отчет по Главному управлению наместника Кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краями его императорским величеством великим князем Михаилом Николаевичем, 6 декабря 1862—6 декабря 1872 г.», Тифлис, 1873, с. 3—4.

7 «Обзор Эриванской губернии», за 1886 г., вед. № 13.

8 «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г.», под ред. Н. А. Тройницкого («Общий свод по империи результатов разработки данных первой всеобщей переписи населения, произведенной 28 января 1897 г.»), LXXI, «Эриванская губерния», СПб., 1905, с. 24—25.

Աղյուսակ № 2

Քաղաքներն ու գավառները	1873 թ.		1886 թ.	
	Տների թիվը	Տղամարդկանց թիվը	Տների թիվը	Տղամարդկանց թիվը
քաղաքները				
Երևան	233	641	315	997
Ալեքսանդրապոլ	99	274	124	354
Նոր Բայազետ	16	69	44	114
Նախիջևան	123	347	126	362
Օրդուբադ	27	70	13	37
Ընդամենը	498	1401	622	1864
գավառները				
Երևանի	231	951	252	1096
Ալեքսանդրապոլի	208	718	261	1087
Նոր Բայազետի	120	388	157	600
Նախիջևանի	225	730	207	827
Սուրմալուի	130	465	164	603
Շարուր-Դարալագյազի	169	560	241	551
Էջմիածնի	255	1021	346	1418
Ընդամենը	1338	4833	1628	6182
Հանրագումարը	1836	6234	2250	8046

յաստան՝ պաշտոնավարության կամ զինվորական ծառայության համար։ Ինչ վերաբերում է հոգևորականներին ու վանականներին, ապա նրանց մասին տեղեկություններ չկան։ Սակայն կասկածից վեր է, որ հոգևորականների մեծ մասը նույնպես տեղացիներ էին։

Աղյուսակ № 3

Ծննդավայրերը	Ծառանգական ազնվական		Անձնական ազնվականներ և պաշտոնյաներ	
	Տղամարդ	Կին	Տղամարդ	Կին
Նույն գավառում	3547	3338	461	490
Երևանի նահանգի այլ գավառներում	250	251	176	133
այլ նահանգներում	711	569	490	355
ուրիշ պետություններում	21	19	5	7
Ընդամենը	4529	4177	1132	985

Արտոնյալների ծննդավայրերի պատկերը համարյա այդպիսին էր նաև Արևելյան Հայաստանի այլ շրջաններում՝ Զանգեզուրում, Լոռիում, Իջևան—Շամշադինում և այլն[9]։

1897 թ. մարդահամարի տվյալներով կարելի է պարզել արտոնյալների առանձին խմբերի թվաքանակը։ Երևանի նահանգում այն ուներ հետևյալ պատկերը[10]։

9 «Первая всеобщая перепись...», LXIV, Елисаветпольская губерния, СПб., 1904, с. 26—27, LXIX, Тифлисская губерния, СПб., 1905, с. 35—36.

10 Նույն տեղում, LXXI, Эриванская губерния, с. 30.

Աղյուսակ № 4

Արտոնյալներ	Նահանգում		Քաղաքներում		Գավառներում (առանց քաղաքների)	
	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին
Ժառանգական ազնվականներ	4529	4177	1527	1314	3002	2863
անձնական ազնվականներ և ոչ ազնվական պաշտոնյաներ	1132	985	932	842	200	143
քրիստոնյա հոգևորականներ	3422	3109	605	473	2817	2636
ժառանգական ու անձնական պատվավոր քաղաքացիներ	887	771	272	189	615	582
վաճառականներ	492	522	393	412	99	110

№ 4 աղյուսակից երևում է, որ ժառանգական ազնվականները կազմում էին արտոնյալների հարաբերական մեծամասնությունը։ Նրանցից հետո մեծաքանակ էին հոգևորականները, այնուհետև՝ անձնական ազնվականներն ու ոչ ազնվական պաշտոնյաները, ժառանգական ու անձնական պատվավոր քաղաքացիները, իսկ վաճառականները համեմատաբար սակավաթիվ էին։ Երբ 1897 թ. մարդահամարի տվյալները համեմատում ենք 1865 թ. տեղեկությունների հետ, ապա տեսնում ենք, որ այն ժամանակ արտոնյալների մեջ հարաբերական մեծամասնություն էին կազմում հոգևորականները։ Դա բացատրվում է նրանով, որ 1897 թ. մարդահամարը շրջանցել է մահմեդական հոգևորականներին։ Եթե հնարավոր լիներ բերել նրանց թիվը, ապա հավանական է, որ արտոնյալների քանակական նախկին դասավորությունը պահպանվեր։

Արտոնյալների կազմի քանակական հարաբերությունը համարյա այդպիսին էր նաև Արևելյան Հայաստանի այլ շրջաններում[11]։

Մեր ձեռքի տակ եղած աղբյուրները հնարավորություն են տալիս նաև պարզել, թե ինչ համամասնությամբ էր աճում Երևանի նահանգի ամբողջ բնակչության և արտոնյալ դասի քանակական հարաբերակցությունը[12]։

Աղյուսակ № 5

Տարեթվերը	Նահանգի ամբողջ բնակչությունը	Ազնվականներ, հոգևորականներ, վաճառականներ	Տոկոսային հարաբերությունը
1865	437.717	9.099	2,7
1873	535.040	12.400[13]	2,3
1886	652.096	15.368	2,3
1897	829.556	18.368	2,2

11 Նույն տեղում, LXIV, «Карсская область»„ СПб., 1900, «Елисаветпольская губерния», с. 2, LXIX, «Тифлисская губерния», с. 2.

12 «Сборник статистических сведений о Кавказе», т. I, отд. I, гл. III, с. 8, «Обзор Эриванской губернии» за 1886 г., вед. № 12—13; «Первая всеобщая перепись...», LXXI, «Эриванская губерния», с. 2.

13 Երևանի նահանգապետի 1886 թ. հաշվետվության մեջ ցույց է տրված միայն տղամարդկանց թիվը՝ 6234 մարդ։ Եթե ընդունենք, որ այդքան էլ կին է եղել, ինչպես դա հաշվում էին վիճակագրության մեջ, կստացվի 12468 մարդ։

№ 5 աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ արտոնյալ դասն աճում էր համարյա այնպիսի տեմպերով, ինչ ամբողջ բնակչությունը։ Եվ դա բնական է, քանի որ արտոնյալները, ապրելով առավելապես գյուղում, ենթարկվում էին այն դեմոգրաֆիկ օրինաչափություններին, ինչ գյուղացիները։ Ճիշտ է, 1865 թ. արտոնյալների տոկոսը փոքր-ինչ ցածր էր, քան հետագա տարիներին, բայց դա այն բանի հետևանք է, որ 1865 թ. աղբյուրներում չի բերվում վաճառականների թվաքանակը։ Տվյալներն այնուհետև ցույց են տալիս, որ ինչպես դարի կեսերին, այնպես էլ վերջերին, արտոնյալները կազմում էին երկրի բնակչության աննշան փոքրամասնությունը։ Ինվող հարցի հանգամանորեն ուսումնասիրման համար անհրաժեշտ է ժառանգական ազնվականներին, այսինքն՝ կալվածատերերին կամ հողատերերին առանձնացնել մնացած արտոնյալներից՝ պաշտոնյաներից, հոգևորականներից, զինվորական ծառայողներից ու վաճառականներից։ Դա կարելի է անել միայն մոտավորապես, քանի որ արտոնյալների ոչ կալվածատիրական խմբերի որոշ մասը նույնպես ուներ ընդարձակ հողատարածություններ։ 1897 թ. տվյալներով ժառանգական ազնվականները կազմում էին 8706 մարդ կամ արտոնյալների 47, իսկ Երևանի նահանգի ամբողջ բնակչության շուրջ 1%-ը[14]։ Ահա այդ աննշան փոքրամասնությունը տիրում էր զգալի չափի հողեր և շահագործում նշանակալի թվով գյուղացիների։

Մեր ձեռքի տակ եղած նյութերը հնարավորություն են տալիս ներկայացնելու Արևելյան Հայաստանի նաև այլ շրջանների արտոնյալ դասի թվաքանակը։ 1897 թ. մարդահամարի տվյալներով Կարսի մարզում, Զանգեզուրի, Ղազախի ու Շուշվա գավառներում բնակչության և արտոնյալների թվաքանակը հետևյալ պատկերն էր ներկայացնում[15].

Աղյուսակ № 6

Շրջանները	Բնակչության թիվը (մարդ)	Արտոնյալների թիվը (մարդ)				Արտոնյալների և ընդհանուր բնակչության տոկոսային հարաբերությունը
		ազնվականներ	հոգևորականներ	վաճառականներ	ընդամենը	
Կարսի մարզ	290654	2866	1332	241	4439	1,5
Զանգեզուրի գավառ	137871	6015	859	—	6874	4,9
Ղազախի գավառ	112074	3369	325	15	3709	3,3
Շուշվա գավառ	138771	7588	1484	597	9669	6,8
Բորչալուի գավառ	128587	2130	838	19	2987	2,1

№ 6 աղյուսակից երևում է, որ արտոնյալները մեծաթիվ էին Շուշվա ու Զանգեզուրի գավառներում, կազմելով բնակչության 4,9—6,8%-ը։ Դա 2—3 անգամ ավելի էր, քան Երևանի նահանգում։ Արտոնյալները զգալի թիվ էին կազմում նաև Ղազախի գավառում։ Կարսի մարզում նրանք համեմատաբար քիչ էին։ Հատկանշական է, որ Զանգեզուրի ու Ղազախի գավառներում վաճառականներ չկային կամ համարյա չկային, որը պայմանավորված էր քաղաքային կյանքի բացակայությամբ։

Անդրադառնալով արտոնյալների բնակության վայրերին, պետք է նկատել, որ ինչպես Երևանի նահանգում, այնպես էլ Արևելյան Հայաստանի այլ շրջաններում, նրանք ապրում էին առավելապես գյուղերում։ Այսպես, 1897 թ. տվյալներով Կարսի մարզում 4439 արտոնյալներից 1970-ը բնակվում էր

---

14 «Первая всеобщая перепись...», LXXI, «Эриванская губерния», с. 2, 24, 25.

15 Նույն տեղում, LXIV, «Карсская область», с. I, LXIII, «Елисаветпольская губерния», с. 2, LXIX, Тифлисская губерния, с. 35—36. Մենք ստիպված ենք եղել վերցնել ամբողջ Շուշվա ու Ղազախի գավառների վերաբերյալ տվյալները, քանի որ անհնարին է դրանցից տարանջատել Արևելյան Հայաստանի շրջանների մասին եղած նյութերը։

քաղաքում, իսկ 2469-ը՝ գյուղում։ Այդ նույն թվին Շուշվա գավառում 9669 արտոնյալներից 6234-ը՝ ապրում էր գյուղում, իսկ 3135-ը՝ քաղաքում[16]։ Զանգեզուրի ու Ղազախի գավառներում նրանց սոսկ չնչին մասն էր ապրում քաղաքում։

Այժմ անցնենք Արևելյան Հայաստանի արտոնյալ դասի ազգային կազմի բնութագրմանը։ Նախապես նշենք, որ պաշտոնական աղբյուրներն ինչպես ամենուր, այնպես էլ Անդրկովկասում ու Արևելյան Հայաստանում, բնակչությանը բաժանում էին ոչ այնքան ըստ ազգությունների, որքան ըստ կրոնի։ Բայց դա չի խանգարում լուսաբանելու մեզ հետաքրքրող հարցը, քանի որ Արևելյան Հայաստանում բնակվող յուրաքանչյուր ազգություն ու ժողովուրդ ուներ իր կրոնը։

1865 թ. տվյալներով Երևանի նահանգի արտոնյալ դասը ստորաբաժանվում էր հետևյալ դավանանքների[17].

Աղյուսակ № 7

Արտոնյալներ	Քրիստոնյաներ (մարդ)			Մահմեդականներ (մարդ)	
	ուղղափառներ	հայ լուսավորչականներ	հայ կաթոլիկներ	շիաներ	սյունիներ
ժառանգական ազնվականներ	101	29	19	—	—
անձնական ազնվականներ	177	412		—	—
մելիքներ	—	248	—	—	—
դինվորական աստիճան ունեցողներ	—	5	—	—	36
խաներ	—	—	—	123	—
բեգեր	—	—	—	3064	—
աղաներ	—	—	—	40	—
հոգևորականներ	61	3484	71	1223	—
ընդամենը	339	4178	90	4450	36

Եթե նկատի ունենանք, որ լուսավորչականներն ու կաթոլիկները հայերն էին, ուղղափառները՝ գերազանցապես ռուսները, իսկ մահմեդականները՝ ադրբեջանցիները, ապա կտեսնենք, որ արտոնյալ դասի մեջ ռուսների թիվը 339 էր, հայերինը՝ 4268, ադրբեջանցիներինն ու այլ մահմեդականներինը՝ 4486։ Այդպիսով, ընդհանուր առմամբ գերիշխում էին ադրբեջանցի և այլ մահմեդականները։ Բայց հարցը միայն քանակական գերակշռության մեջ չէ, նրանք գերիշխում էին նաև նյութապես, որովհետև մեծ մասամբ բեգեր ու խաներ էին, այսինքն՝ հողատերեր։ Հայերի թվաքանակը մեծ էր հոգևորականության մեջ։

1870—1880-ական թվականներին Երևանի նահանգի արտոնյալ դասի ազգային կազմի բնութագրման համար ունենք հետևյալ տվյալները (տե՛ս աղյուսակ № 8)[18]։

№ 8 աղյուսակից երևում է, որ քրիստոնյաները (որոնք գերազանցապես հայեր էին) թե՛ 1870-ական և թե՛ 1880-ական թվականներին անհամեմատ շատ էին, քան մահմեդականները (որոնք առավելապես ադրբեջանցիներ էին)։ Առանձին քաղաքներում մահմեդական արտոնյալներ նույնիսկ չկային կամ համարյա չկային (Նոր Բայազետ, Ալեքսանդրապոլ), բայց այլ քաղաքներում (Նախիջևան, Օրդուբադ) ու գավառներում (Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի, Սուրմալուի) նրանք շարունակում էին կազմել մեծամասնություն։

16 Նույն տեղում, LXIV, «Карсская область», с. 1, LXIII, «Елисаветпольская губерния», с. 2.

17 «Сборник статистических сведений о Кавказе», т. I, отд. I, гл. III, с. 10—11.

18 «Обзор Эриванской губернии» за 1886 г., вед. № 13.

Աղյուսակ № 8

Գաղաքներն ու գավառները	1873 թ.				1886 թ.			
	քրիստոնյաներ		մահմեդականներ		քրիստոնյաներ		մահմեդականներ	
	ծուխ	տղամարդ	ծուխ	տղամարդ	ծուխ	տղամարդ	ծուխ	տղամարդ
քաղաքները								
Երևան	145	402	88	239	216	632	99	365
Ալեքսանդրապոլ	97	268	2	6	124	354	—	—
Նոր Բայազետ	16	69	—	—	44	114	—	—
Նախիջևան	44	115	79	232	45	119	81	243
Օրդուբադ	4	17	23	53	2	9	11	28
ընդամենը	306	871	192	530	431	1228	191	636
գավառները								
Երևանի	113	436	118	515	117	523	135	573
Ալեքսանդրապոլի	201	673	7	45	249	1036	12	51
Նոր Բայազետի	92	291	28	97	112	448	45	152
Նախիջևանի	106	340	119	390	107	393	100	434
Սուրմալուի	59	201	71	264	63	257	101	346
Շարուր-Դարալագյազի	40	156	129	410	51	195	190	356
Էջմիածնի	150	631	96	390	235	909	111	509
ընդամենը	770	2722	568	2111	934	3761	694	2421
հանրագումարը	1076	3593	760	2641	1365	4989	885	3057

1897 թ. մարդահամարի տվյալները հնարավորություն են տալիս պարզելու արտոնյալ դասի առանձին խմբերի ազգային պատկերը[19]։

№ 9 աղյուսակը ցույց է տալիս, որ 1897 թ. Երևանի նահանգում արտոնյալ դասի մեծամասնությունը շարունակում էին կազմել հայերը (10040 մարդ), նրանցից հետո մեծաթիվ էին ադրբեջանցիներն ու այլ մահմեդականները (6344 մարդ), ապա՝ ռուսները (2154 մարդ)։ Այդ դասի մեջ արդեն նկատելի էին նաև քրդերը։ Դա պայմանավորված էր նրանով, որ ցարական կառավարությունը քրդերի մեջ իր սոցիալական հենարանն ամրապնդելու նպատակով բազմաթիվ օբաբաշիների արտոնություններ շնորհեց, նրանց դարձնելով փաստացի հողատերեր ու ջոլատերեր։ Մյուս ազգությունների ներկայացուցիչները սակավաթիվ էին։ Սակայն արտոնյալ հայերի ճնշող մեծամասնությունը հոգևորականներ էին, մինչդեռ արտոնյալ ադրբեջանցիներն ու այլ մահմեդականները, ռուսներն ու վրացիները մեծ մասամբ ժառանգական ու անձնական աղնվականներ էին։ Եթե ադրբեջանցիներն ու այլ մահմեդականները գերազանցապես հողատեր-կալվածատերեր էին, ապա ռուսները, այլ եվրոպացիներն ու վրացիները՝ պաշտոնյաներ և ծառայողներ։

1897 թ. մարդահամարի տվյալներում Կարսի մարզի արտոնյալ դասի ազգային կազմի մասին տեղեկություններ չկան։ Ինչ վերաբերում է Արևելյան

[19] «Первая всеобщая перепись...», LXXI, «Эриванская губерния», с. 164.

Աղյուսակ № 9

Ազգությունը	Ժառանգական ազնվականներ և պաշտոնյաներ		Անձնական ազնվականներ և պաշտոնյաներ		Քրիստոնյա հոգևորականներ		Ժառանգական ու անձնական պատվավոր քաղաքացիներ		Վաճառականներ	
	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին
ռուսներ	550	516	474	402	34	32	83	56	3	4
լեհեր	85	29	24	20	—	—	—	—	3	—
լիտվացիներ ու լատիշներ	3	1	2	—	1	—	—	—	1	—
գերմանացիներ	13	5	13	20	—	—	2	1	2	—
հույներ	4	1	7	7	13	12	—	1	7	11
հայեր	288	318	486	460	3187	2911	785	703	430	462
քրդեր	431	414	5	5	6	—	—	—	—	—
հրեաներ	4	6	3	1	—	—	3	—	1	2
վրացիներ	106	59	29	14	23	21	10	1	2	1
լեզգիներ, չեչեններ, չերքեզներ	5	—	3	—	—	—	—	—	—	—
թուրքեր և ադրբեջանցիներ	3040	2828	80	48	136	117	3	9	42	41
ասորիներ և ուրիշներ	—	—	5	4	22	15	1	—	1	1
ընդամենը	4529	4177	1132	981	3422	3108	887	771	492	522

Հայաստանի Զանգեզուր, Իջևան—Շամշադին, Լեռնային Ղարաբաղ և Լոռի շրջաններին, ապա առկա են հետևյալ տվյալները (տե՛ս աղ. № 10)[20]։

№ 10 աղյուսակից երևում է, որ Արևելյան Հայաստանի նշված շրջաններում ևս ադրբեջանցիներն ու այլ մահմեդականները կազմում էին ժառանգական ազնվականների մեծ մասը, իսկ հայերը գերիշխում էին արտոնյալների մյուս խմբերում։ Որոշակի քանակ էին կազմում նաև ռուսներն ու վրացիները, իսկ մյուս ազգությունների ներկայացուցիչները փոքրաթիվ էին։ Ի տարբերություն Երևանի նահանգի, որտեղ հայ արտոնյալների մեծ մասը հոգևորականներ էին, Արևելյան Հայաստանի նշված շրջաններում նրանք ժառանգական ազնվականներ էին։ Բայց, այդուհանդերձ, Արևելյան Հայաստանի համարյա բոլոր շրջաններում ժառանգական ազնվականների մեջ քանակապես գերիշխում էին ադրբեջանցի ու այլ մահմեդականներ։ Դա արդյունք էր այն բանի, որ ցարիզմը պահպանել էր միացման ժամանակ Արևելյան Հայաստանում գոյություն ունեցող մահմեդական կալվածատիրությունը։

Այսպիսով, XIX դ. երկրորդ կեսին Արևելյան Հայաստանում արտոնյալ դասը կազմում էր ազգաբնակչության աննշան փոքրամասնությունը։ Այն բաղկացած էր հիմնականում հայերից, ադրբեջանցի ու այլ մահմեդականներից և ռուսներից։ Մնացած ազգությունների ներկայացուցիչները խիստ սակավաթիվ էին։ Բնակչության այդ խավը, վայելելով արտոնություններ,

[20] «Первая всеобщая перепись...», LXIV, «Елисаветпольская губерния», с. 164—174, LXIX, «Тифлисская губерния», с. 272.

Աղյուսակ № 10

Ազգությունները	Ժառանգական ազնվականներ		Անձնական ազնվականներ ու պաշտոնյաներ		Քրիստոնյա հոգևորականներ		Ժառանգական ու անձնական պատվավոր քաղաքացիներ		Վանառականներ	
	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին
ռուսներ	135	112	116	96	23	14	21	23	1	3
լեհեր	19	17	6	—	—	—	1	—	—	—
հույներ	5	7	2	4	111	115	6	5	—	—
հայեր	1410	1397	93	117	1343	1217	708	787	11	10
քրդեր	37	20	—	—	—	—	—	—	—	—
թուրքեր և ադրբեջանցիներ	6772	5687	13	7	—	—	38	72	—	—
լիտվացիներ ու լատիշներ	1	—	—	—	2	1	—	—	—	—
գերմանացիներ	81	—	1	2	—	2	2	1	1	—
վրացիներ	80	10	66	11	18	16	10	3	3	5
ընդամենը	8540	7250	297	237	1497	1365	786	891	16	18

Հարստահարում էր մեծամասնությանը և, լինելով ցարական կառավարության սոցիալական հենասյուներից մեկը, նպաստում էր նրա հակաժողովրդական, հետադիմական քաղաքականության կենսագործմանը։

ЧИСЛЕННОСТЬ И НАЦИОНАЛЬНЫЙ СОСТАВ ПРИВИЛЕГИРОВАННОГО СОСЛОВИЯ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX в.

АЗАТ АМБАРЯН

Резюме

Привилегированное сословие Восточной Армении состояло из землевладельцев или помещиков, христианского и магометанского духовенства, царских чиновников и купцов. Их количество в различных районах Восточной Армении было разное. По данным переписи 1897 г. они составляли: в Эриванской губернии—2,2, в Карсской области—1,5, в Зангезурском и Казахском уездах—соответственно 4,9 и 3,3 процента всего населения. Почти половина привилегированного сословия были чиновники, военнослужащие, духовенство и купцы, остальная же половина—землевладельцы-помещики. В числе землевладельцев преобладали азербайджанцы, затем армяне, среди духовных лиц и купцов—армяне чиновников и военнослужащих—русские, армяне, грузины и т. д. Эта небольшая кучка, обладая значительным движимым и недвижимым имуществом и пользуясь привилегиями, являлась социальной опорой самодержавия в Восточной Армении.